Հաստատում եմ՝

Աբովյանի կրթահամալիր ՊՈԱԿ-ի

Տնօրեն՝ DAGHBASHYAN ANAHIT 5107700314 Digitally signed by DAGHBASHYAN *Ա. Դաղբաշյան*

ՄԿԱ գծով տեղակալ՝ Ե. Քոլայան

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊՈԱԿ_Ի

12 -ՐԴ Ա ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Մեջլումյան

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. ***Ներածություն*** *(դասարանի ընդհանուր բնութագիրը). Դասարանը բաղկացած է 30 սովորողներից (16տղա, 14 աղջիկ): Ընկերասեր են, համախմբված, պատրաստակամորեն կատարում են իրենց առաջադրված հանձնարարությունները:*

Գերազանց առաջադիմությամբ 2աշակերտ՝1տղա, 1 աղջիկ
Հարվածային առաջադիմությամբ 4աշակերտ՝4 աղջիկ
Միջակ առաջադիմությամբ՝24աշակերտ՝15 տղա, ***9*** *աղջիկ*

2. Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

ա/ Մեծ ուշադրություն պետք է դարձնել աշակերտների առաջադիմության բարձրացմանը և քննությունների նախապատրաստմանը:

բ/ Դաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս պետք է հաշվի առնվեն տարիքային առանձնահատկությունները:

գ/ Կկազմակերպվեն հայրենասիրական ուղղվածությամբ էքսկուրսիաներ:

դ/ Աշխատանքներ կտարվեն դասարանում միասնականության բարձրացման համար: 3. Հայեցի դաստիարակություն.

3.1 Հոգևոր դաստիարակություն*. Կարևորել հայոց եկեղեցու պատմություն առարկան, դասերի ընթացքում տալ ճիշտ գաղափար մեր կրոնի և հավատքի մասին:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն*. Աշակերտների մեջ սերմանել գեղեցիկի հանդեպ սիրո զգացում, գնահատել գեղեցիկի դերը մարդկային փոխհարաբերություններում:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն*. Ակտիվ մասնակցել դպրոցում կազմակերպվող ռազմահայրենասիրական միջոցառումներին: Կազմել պաստառներ ռազմահայրենասիրական ուղղվածությամբ:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն. *Մասնակցել սպորտային միջոցառումներին, ֆիզկուլտուրայի դասերին միշտ լինել սպորտային հագուստով:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն. *Զգալ պատասխանատվություն դպրոցի և նրա շրջապատի, դասարանի նկատմամբ: Պահպանել գույքը, ակտիվ մասնակցել դպրոցին վերաբերվող բոլոր աշխատանքներին:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն. *Մեր սերմանել դեպի բնությունը, մասնակցել կանաչապատման աշխատանքներին:*

3.7 Դպրոց-ընտանիք կապը. *Պարտավորեցնել ծնողներին սիստեմատիկ այցելել դպրոց, հետևել երեխաների առաջադիմության բարձրացմանը, հետևել երեխաների հաճախումներին, կատարել իրենց առաջ դրված խնդիրները :*

Դասղեկի գործառույթները

Դաստիարակչական աշխատանքներ իրականացնելու ընթացքում դասղեկը կատարում է՝
• աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն (մանկավարժահոգեբանական ախտորոշում),
• կրթության գործընթացում դասարանական կոլեկտիվի փոխհարաբերությունների՝(փոխհարաբերություններ աշակերտների միջև, աշակերտների և ուսուցիչների միջև, ներդասարանական, միջդասարանական փոխհարաբերություններ) վերլուծություն, համակարգում, կարգավորում,
• դասարանական կոլեկտիվի կենսագործնեության փուլերի (կիսամյակ նայլն) և միջոցառումների (դասղեկական ժամեր, տեղեկատվական բոպեներ, ստեղծագործական միջոցառումներ, մրցույթներ, ցուցահանդեսներ և այլն) պլանավորում, նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում, վերլուծություն,
• սովորողների սոցիալական պաշտպանություն, (ցանկալի է սոցիալական մանկավարժի հետ համատեղ),
• աշխատանք ծնողների հետ,
• Մանկավարժական աջակցություն աշակերտական ինքնավարության դասարանական մարմնին,
• էլեկտրոնային դասամատյանի կազմակերպում:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրությունը
Ուսումնական տարվա սկզբին

• Կազմում է աշակերտների ցուցակը (սեպտեմբեր, առաջին շաբաթ):
• Կազմակերպում է դասագրքերի ստացումը գրադարանից (օգոստոսի վերջին-սեպտեմբեր, առաջին շաբաթ):
• Ուսումնասիրում է աշակերտների ընտանեկան դաստիարակության պայմանները (առաջին քառորդ):
• Վերստուգում կամ պատրաստում է դասարանի սոցիալական անձնագիրը և հանձնում է սոցիալական մանկավարժին (առաջին քառորդ):
• Հավաքում է սպառիչ տեղեկություններ՝ լրացուցիչ կրթության հաստատություններում, դասարանի աշակերտների մասնակցության մասին (հոկտեմբեր):
• Աշակերտների շրջանում՝ նրանց ընդունակությունները զարգացնելու նպատակով, աշխատանք է տանում՝ բազմազան գործունեության ոլորտում (այդ թվում՝ լրացուցիչ կրթության) նրանց ներգրավելու համար (առաջին քառորդ):

Ամենօրյա աշխատանք

• Դասամատյանում նշում է բացակայությունները
• Մանկավարժական օգնություն է ցույց տալիս՝ դասարանական և դպրոցական ինքնավարության օղակների, տվյալ դասարանի ներկայացուցիչների աշխատանքների կազմակերպմանը:Հետևում է աշակերտների արտաքին տեսքի պատշաճությանը:
• Հետևում է աշակերտների սնվելուն, և բարեկիրթ վարքին՝ բուֆետում, ճաշարանում:
• Հետևում է դասարանում հերթապահության կազմակերպմանը:

Ամենշաբաթյա աշխատանք

• Դասղեկական ժամի վարում
• Դպրոցի, դասարանի վերահսկողությանն հանձնված տարածքի մաքրության վերահսկում:
• Այլ պլանավորված աշխատանքների կատարում:

Ամենամսյա աշխատանք

• Դասարանի կոլեկտիվը նախապատրաստում է, կազմակերպում է՝ համադպրոցական գործընթացներին մասնակցելու համար:
• Պարապմունքներ է անցկացնում՝ անվտանգ կենսագործունեության կանաններ (բարձր դասարանների) համար:
• Կազմակերպում է դասարանին հատկացված դպրոցական տարածքի ամենամսյա մաքրում:

Ուսումնական քառորդի ընթացքում

• Կազմակերպում է երեխաների առողջության պահպանման հետ կապված բժշկական երաշխավորությունների կատարումը:
• Կազմակերպում է դասարանի հերթապահությունը դպրոցում (գրաֆիկի համաձայն):
• Օպերատիվ կերպով՝ դպրոցի տնօրենին, դաստիարակության գծով փոխտնօրենին, սոցիալական մանկավարժին տեղեկացնում է սովորողների դեվիանտ վարքի դրսևորումների, դպրոցական կանոնակարգի կոպիտ խախտումների մասին: Իր աշակերտների սոցիալական ապահովության համար նրանց հետ համատեղ որոշումներ է կայացնում:
• Հետևում է դասագրքերի պահպանմանը:
• Ճշտում է իր դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության օղակներում մասնակցության մասին տեղեկությունները
• Վարում է մանկավարժական խորհրդատվություն:
• Վարում է ծնողական ժողովներ:

Քառորդի վերջում

• Կազմակերպում է ուսումնական քառորդում դասարանի կրթադաստիարակչական կենսագործունեության արդյունքների ամփոփումը:
• Դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենին ներկայացնում է հաշվետվություն դասարանի առաջադիմության մասին

Ուսումնական տարվա վերջում

• Դասարանի ակտիվի հետ համատեղ, նախապատրաստում է դասարանի կենսագործունեության վերաբերյալ հաշվետվություն և կազմակերպում է ակտիվի վերընտրություն:
• Կատարում է) դասարանի կրթադաստիարակչական աշխատանքի ամփոփիչ վերլուծություն) և հանձնում է դպրոցի դաստիարակության գծով փոխտնօրենին:
• Կազմակերպում է դասագրքերի հանձնումը գրադարան:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հ/հ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Դասասենյակի կահավորում, նախապատրաստում նոր ուստարվան	25 Օգոստոսի 31	աշակերտ դասղեկ
2.	Աջակցել գրադարանավարին՝ կատարելու դասագրքերի բաշխումը	27 Օգոստոս 31	Գրադարան ավար աշակերտ դասղեկ
3.	Գիտելիքի օր	Սեպտեմ-բեր	Տնօրինություն աշակերտներ
4.	Դասարանական ժողով	Սեպտեմ-բեր	Դասղեկ աշակերտ
5.	Մշտապես հետևողական լինել աշակերտների հաճախումներին	Տարվա ընթացք	աշակերտ դասղեկ
6.	Մշտապես ապահովել ծնող-դպրոց կապը՝ աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքներն էլ ավելի արդյունավետ դարձնելու համար:	Տարվա ընթացք	Դասղեկ ծնող
7.	**ա.** Բացահայտել չառաջադիմող աշակերտներին և պարզել հետ մնալու պատճառները: **բ.** Ներդնել միջոցներ հետ մնացող աշակերտների ուսման մակարդակը բարձրացնելու համար: **գ.** Կազմակերպել կիսամյակային ամփոփումներ ուսումնադաստիարակչական	Տարվա ընթացք	Դասղեկ Ուսուցիչներ

	աշխատանքների վերաբերյալ: **դ.** Մշակել և ներդնել առաջադիմող աշակերտների խրախուսման մեխանիզմներ:		
8.	Սահմանել կարգ ՝ 1.Յուրաքանչյուր սովորող դպրոցում լինի դասերը սկսվելուց 15 րոպե առաջ՝ ըստ <<Աշխատանքային ժամանակացույցի>> հիմք ընդունելով՝<<Ներքին կարգապահական կանոնները>>:	Տարեսկիզբ	ՄԿԱԳ Դասղեկ
9.	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների,անհարգելի բացակայությունների նկատմամբ,ժամանակին կանխել դրանք,անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքի սահմանված կարգով:	Տարվա ընթացք	ՄԿԱԳ,ԴԱԿ Դասղեկ
10.	**Աջակցություն սոցիալապես անապահով երեխաներին:** **ա .** Սոցիալապես անապահով երեխաների հաշվառում: **բ.** Մշակել և ներդնել միջոցներ՝ սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:	Տարվա ընթացք	ՄԿԱԳ,ԴԱԿ Դասղեկ
11.	Ուշադրության կենտրոնում պահել դժվար դաստիարակվող երեխաներին և համապատասխան աշխատանք տանել նրանց հետ:	Տարվա ընթացք	ՄԿԱԳ,ԴԱԿ Դասղեկ
12.	Պատրաստել ՀՀ հերոսների մասին պատմող և անկախության 30-րդ ամյակը լուսաբանող վահանակ:	սեպտեմբեր	Աշակերտ Դասղեկ
13.	Պատրաստել 44 օրյա պատերազմի հերոսների մասին պատմող վահանակ	Սեպտեմ- բեր 27	Աշակերտ Դասղեկ

14.	Ուսուցչի տոնին նվիրված Պատի թերթի պատրաստում՝ <Տոնդ շնորհավոր սիրելի ուսուցիչ> խորագրով:	5 Հոկտեմբեր	Աշակերտ դասղեկ
15.	Կազմակերպել և անցկացնել բանավեճեր,քնարկումներ, կլոր սեղաներ և այլն,որոնք ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	Հոկտեմբեր	Աշակերտ Դասղեկ Ուսուցիչներ
16.	Անցկացնել զրույց նվիրված «Թարգմանչաց» տոնին	Հոկտեմբեր	Աշակերտ Դասղեկ
17.	Աշակերտներին ծանոթացնել ՄԱԿ-Ի միջազգային կառույցի գործունեության և նրանց կողմից սահմանված և ընդունված մարդու իրավունքների հռչակագրին:	Նոյեմբեր	Աշակերտ Դասղեկ
18.	Դպրոցում կազմակերպել <<Առողջության օր>>,կազմակերպել զրույց- զեկուցումներ առողջ ապրելակերպի շուրջ::	Նոյեմբեր	Աշակերտ Դասղեկ
19.	ՈՒսման առաջավորներին նախապատ-րաստել ներդպրոցական օլիմպիադանե-րին:	Նոյեմբեր	Աշակերտ Դասղեկ
20.	Ծնողներին և աշակերտներին ծանոթացնել պետական ավարտական քննությունների կարգին:	Նոյեմբեր	Աշակերտ Դասղեկ
21.	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր	Դեկտեմբեր 7	Աշակերտ Դասղեկ
22.	Աշակերտներին ծանոթացնել ազգային ոգու պահպանման, հայեցի դաստիարակության կարևոր ուղղություններին՝ ռազմահայրենասիրական ազգային գաղափարախոսության տեսակետներին:	Դեկտեմբեր	Աշակերտ Դասղեկ
23.	Ամանորին ընդառաջ ձևավորել դասարանը, պատրաստել պատի թերթ:	Դեկտեմբեր	Աշակերտ

			Դասղեկ
24.	Դասարանի 1-ին կիսամյակի առաջադիմության ամփոփում	Դեկտեմբեր	Դասղեկ
25.	Նոր ուսումնական պայմանների ներկայացում աշակերտներին:	Հունվար	Դասղեկ
26.	Շնորհալի աշակերտների ուժերով կազմակերպել ցուցահանդեսներ՝ նվիրված հայոց բանակի օրվան:	Հունվար	Աշակերտ Դասղեկ
27.	Մայրենիի օրվան նվիրված միջոցառման կազմակերպում:	փետրվար	Աշակերտ Դասղեկ
28.	Գիրք նվիրելու օր	փետրվար	Աշակերտ Դասղեկ ՄԿԱԳ
29.	Գարնանային տոներին նվիրված պատի թերթի պատրաստում:	Մարտ-ապրիլ	Աշակերտ Դասղեկ
30.	Ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսների հիշատակին նվիրված զրույցներ, պատի թերթեր:	Ապրիլ	Աշակերտ Դասղեկ
31.	Աշակերտների հետ քննարկել ապրիլի 24-ի ոճիրը	Ապրիլ	Աշակերտ Դասղեկ
32.	Աշակերտների մոտ ձևավորել ակնածանք դրոշի, զինանշանի ու օրհներգի նկատմամբ, խոսել ազգային հերոսներից	Ապրիլ	Աշակերտ Դասղեկ
33.	Աշակերտների հաղորդակցման և համագործակցության կարողությունների և հմտությունների զարգացման համար անցկացնել կոլեկտիվի սոցիոլոգիական թեստ՝ << հասկանանք մեկս մյուսին>>:	Մայիս	Աշակերտ Դասղեկ
34.	Ապահովել մշտական համագործակցությունը դասավանդող բոլոր ուսուցիչների հետ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացման համար:	Տարվա ընթացք	Դասղեկ Ուսուցիչներ
35.	Աշխատանքին ,արհեստներին նվիրված զրույցների,զեկույցների կազմակերպում	Տարվա ընթացք	Աշակերտ Դասղեկ

36.	*Մայիսյան եռատոնին նվիրված թեմատիկ զրույցներ, ռեֆերատ աշխատանքներ, պատի թերթերի պատրաստում:*	*Մայիս*	*Աշակերտ Դասղեկ*
37.	*Զրույց մասնագիտական կողմնորոշման մասին*	*Մայիս*	*Աշակերտ Դասղեկ*
38.	*Կազմակերպել «վերջին դաս» և «վերջին զանգ »միջոցառում*	*Մայիս*	*Աշակերտ Դասղեկ*
39.	*Դասարանի 2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության, ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում:*	*Մայիս*	*Դասղեկ*

ՀՀ Կոտայքի մարզի «Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ –ի

2022-2023 ուստարվա դասղեկի թեմատիկ պլան

12-Ա դասարան

ՀՀ	ՈՒսումնական շաբաթներ	Դասղեկի ժամի թեման	Ամիս ամսաթիվ
1	01.09.2022 02.09.2022	Գիտելիքի օր	01.09.2022
2	05.09.2022 09.09.2022	Զրույց «Խաղաղության մշակույթ» թեմայով:	08.09.2022
3	12.09.2022 16.09.2022	Մեծահասակների տեղն ու դերը մեր կյանքում:	15.09.2022
4	19.09.2022 23.09.2022	Զրույց « Անկախությունը մեր սրբագործված արյունն է» թեմայով:	22.09.2022
5	26.09.2022 30.09.2022	44 օրյա պատերազմի հերոսներին նվիրված հուշ երեկո «Կյանքս կյանքիդ գնով»:	29.09.2022
6	03.10.2022 07.10.2022	Յուրաքանչյուն գրագետ մարդ պարտական է իր ուսուցչին:	06.10.2022
7	10.10.2022 14.10.2022	Մասնագիտություններ , որ հետաքրքրում են ինձ անկախ հայաստանի քաղաքացու:	13.10.2022
8	17.10.2022 21.10.2022	Դասարանական ժողով:	20.10.2022
9	31.10.2022	Համակարգիչն ընկեր թե	03.11.2022

	04.11.2022	թշնամի:	
10	07.11.2022 11.11.2022	Զրույց կարողանալ «ոչ» ասել:	10.11.2022
11	14.11.2022 18.11.2022	Պատրաստ եմ արդյոք մտնել նոր կյանք:	17.11.2022
12	21.11.2022 25.11.2022	Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրները:	24.11.2022
13	28.11.2022 02.12.2022	Ֆիլմի դիտում ՄԻԱՎ, ՁԻԱՀ իրական պատմություններ:	01.12.2022
14	05.12.2022 09.12.2022	Զրույց « բնական աղետները» թեմայով:	08.12.2022
15	12.12.2022 16.12.2022	Կլոր սեղան «Ինչ դառնալ», «Ամենամեծ պաշտոնը»:	15.12.2022
16	19.12.2022 23.12.2022	Անհանդուրժողականության դրսևորումները:	22.12.2022
17	09.01.2023 13.01.2023	Բանավեճ «խոսքի էթիկա և կուլտուրա»	12.01.2023
18	16.01.2023 20.01.2023	Դասարանական ժողով	19.01.2023
19	23.01.2023 27.01.2023	Ես իմ բանակի ապագա զինվորն եմ՝ իմ հայրենիքի պաշտպանը	26.01.2023
20	30.01.2023 03.02.2023	Մաքրությունն առողջության երաշխիք	02.02.2023
21	06.02.2023 10.02.2023	Մայրենի լեզվի արժևորումն ազգային ինքնության պահպանման գործում:	09.02.2023
22	13.02.2023 17.02.2023	Ինչով է պայմանավորված մասնագիտության կարևորությունը:	16.02.2023

23	20.02.2023 24.02.2023	Արդյոք ԲՈՒՀ ավարտելը միշտ է բավարար կրթված լինելու համար:	23.02.2023
24	27.02.2023 03.03.2023	Հանձարները սիրո մասին	02.03.2023
25	06.03.2023 10.03.2023	Համայնքային հիմնախնդիրներ	09.03.2023
26	13.03.2023 17.03.2023	Բարոյական արժեքներ , որ իմաստավորում են մեր կյանքը:	16.03.2023
27	03.04.2023 07.04.2023	Մայրության և գեղեցկության տոնի պատի թերթի պատրաստում	23.03.2023
28	10.04.2023 14.04.2023	Մաքրությունն առողջության երաշխիք	06.04.2023
29	17.04.2023 21.04.2023	Իմ ընտանիքը:	13.04.2023
30	24.04.2023 28.04.2023	Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված պաստառի պատրաստում:	20.04.2023
31	01.05.2023 05.05.2023	Աշխատանքի դերը մարդու կյանքում:	04.05.2023
32	08.05.2023 12.05.2023	Դասարանական ժողով:	11.05.2023
33	15.05.2023 19.05.2023	Ինչ տվեց ինձ տարին :	18.05.2023
34	22.05.2023 26.05.2023	Վերջին զանգ :	25.05.2023